ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ

«Զվարթնոց» օդանավակայան, Երևան 0042, ՀՀ, Հեռ.՝ (37410) 28-07-22, էլ. փոստ՝ gdca@gdca.am

N 1.1/10.2/2656-2020

«21» 08 2020 թ.

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀԿ ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԿԻՆ ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Դոյդոյան,

Ի պատասխան 2020 թվականի օգոստոսի 17-ի N 345-98 և էլեկտրոնային հարցումների միասնական հարթակից ստացված N 37682 Ձեր նույնաբովանդակ գրությունների՝ կապված Թռիչքային անվտանգության Եվրոպական գործակալության (EASA) ՀՀ քաղաքացիական ավիացիային առնչվող զեկույցը և/կամ զեկույցի ամբողջական տեքստը չտրամադրելու վերաբերյալ՝ տեղեկացնում ենք, որ ՀՀ քաղաքացիական ավիացիայի կոմիտեում կրկին անգամ քննարկվել են դրանք:

Տեղեկացնում ենք, որ ս.թ.փետրվարի 3-ից 7-ն ընկած ժամանակահատվածում Թռիչքային անվտանգության գործակալության գնահատման այցի եզրակացությունը ենթակա չէ հրապարակման, քանի որ նախատեսված է ծառայողական օգտագործման համար և դրա յուրաքանչյուր հատվածում նշված է, թե ով է կոնկրետ հասցեատերը (Քաղաքացիական ավիացիայի կոմիտեն կամ այն ավիաընկերությունը, որին վերաբերվում է):

Ինչ վերաբերվում է թռիչքային անվտանգության Եվրոպական գործակալության /EASA/ հղումը Ձեզ տրամադրելուն, ապա պայմանավորված այն հանգամանքով, որ աշխատանքային քննարկումներ են ընթանում EASA-ի կողմից տրված հանձնարարականների շտկման, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեր պատճառաբանությունների կամ առարկությունների մասով, Եվրոպական Միությունը ևս դրանք չի հրապարակայնացրել ամբողջ ծավալով, ուստի որևէ հղում, որից կարող եք օգտվել՝ առկա չէ:

Հարգանքով,

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ

ԳԱԼՈՒՍՏ ՊՈՂՈՍՅԱՆ

8/21/2020

X

ԳԱԼՈՒՍՏ ՊՈՂՈՍՅԱՆ

Signed by: POGHOSYAN GALUST 1607790106

Կատարող Վ.Ստեփանյան
Հեռ. 060-43-42-73